ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՌՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

ք.Երևան «04» «փետրվարի» 2021թ.

Վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, մի կողմից, և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության տնօրենի լիազորությունները կատարող տնօրենի առաջին տեղակալ Լիլիթ Մինասյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի, 03 խմբի, 03 դասի, 1091 «Հանրային իրազեկում» ծրագրի, 11001 «Հանրային իրազեկում և հասարակական քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով Կողմերը կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով ՝ մինչև 751 320 800 (յոթ հարյուր հիսունմեկ միլիոն երեք հարյուր քսան հազար ութ հարյուր) ՀՀ դրամ դրամաշնորհի գումար (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառում), կատարման ենթակա գործառույթների նկարագիրը և քանակը ներկայացված են սույն Պայմանագրի անբաժանելի մաս համարվող N1 հավելվածում:

1.3 N1 Հավելվածով ներկայացված իրականացվելիք գործառույթների քանակական ցուցանիշները, պահանջարկից ելնելով, հաստատված պլանային աճողական ցուցանիշների նկատմամբ կարող են լինել փոփոխական:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Աշխատակազմը իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Աշխատակազմի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Աշխատակազմի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Աշխատակազմը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման համակարգի մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Աշխատակազմի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմին ներկայացնել հաշվետվություններ: Եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են Աշխատակազմին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը,

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Աշխատակազմի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Աշխատակազմի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Աշխատակազմի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Աշխատակազմին ներկայացնել տեղեկություններ Պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկի գումարների վերաբերյալ:

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Միջոցառումների (գործառույթների) ընդունում-հանձնումը, վճարման կարգը և ժամկետները

3.1. Աշխատակազմը հաստատում է Կազմակերպության կողմից սահմանված կարգով կազմված և ներկայացրած Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան նախահաշիվը: Նախահաշիվը կազմվում է հաշվի առնելով Որոշմամբ սահմանված եռամսյակային համամասնությունները:

3.2. Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, 2.4.3. կետով սահմանված ժամկետում, Կազմակերպությունը կազմում և Աշխատակազմի հաստատմանն է ներկայացնում տվյալ եռամսյակի ընթացքում Միջոցառումների կատարման վերաբերյալ ընդունման հանձնման արձանագրություն:

3.3. Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա 15-ը, դուրս է գրում հարկային հաշիվ Աշխատակազմին: Հարկային հաշվի գումարը, սույն Պայմանագրով սահմանված դրամաշնորհի գումարի հաշվին, հաշվարկվում է Կազմակերպության տվյալ ամսվա փաստացի (հաշվեգրված) կատարված ծախսերի չափով: Տարեկան կտրվածքով հարկային հաշիվների հանրագումարը չի կարող գերազանցել 1.1 կետում նշված գումարը:

3.4 Կազմակերպությանը վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, յուրաքանչյուր ամիս՝ 1.1 կետով սահմանված ամսական համամասնության չափով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 _____ Կ.Պապիկյան Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Օրբելի 23 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 _____ Լ.Մինասյան Կ. Տ.

Հավելված N 1
« » փետրվարի 2021թ.
կնքված N պայմանագրի

Իրականացվելիք միջոցառման անվանումը՝
Հանրային իրազեկում և հասարակական - քաղաքագիտական հետազոտություններ
Համառոտ բովանդակությունը՝
Կառավարության գործունեության լուսաբանում, թեմատիկ վերլուծություններ և ՀԼՄների ամենօրյա մշտադիտարկում

N	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Գործառույթների քանակ, ըստ եռամսյակների(աճողական)			
		I եռ.	կիսամյակ	9 ամիս	տարի
1	ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում, նյութ/հատ	12	24	36	48
2	Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում, միջոցառում/հատ	3	6	9	12
3	Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում, միջոցառում/հատ	3	6	9	12
4	Հաղորդումների պատրաստում, որոնք կլուսաբանեն Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները, հաղորդում/հատ	24	48	72	96
5	Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում, գրառում/հատ	550	1100	1650	2200
6	Ներքաղաքական թեմաներով անհատական թեմատիկ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	48	96	144	192
7	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ վերլուծական հոդվածների պատրաստում, հոդված/հատ	25	50	75	100
8	Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական ամփոփագրերի պատրաստում, ամփոփագիր/հատ	75	150	225	300
9	Տեղեկատվական ամփոփագրերի պատրաստում արտասահմանյան գործընկեր ՀԼՄ-ների համար, ամփոփագիր/հատ	10	20	30	40
10	Սոցիալ-տնտեսական թեմաներով թեմատիկ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	36	75	112	150

11	Սոցիալական հարթակներում և էլեկտրոնային լրատվամիջոցներում սոցիալ-տնտեսական բնույթի նյութերի հրապարակում և իրազեկում, գրառում/հատ	375	750	1125	1500
12	Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	24	48	72	96
13	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում, ամփոփագիր/հատ	12	24	36	48
14	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին տեղեկատվական բնույթի ամփոփագրերի պատրաստում, ամփոփագիր/հատ	48	96	144	192
15	Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	12	24	36	48
16	Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	24	48	72	96
17	Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում, նյութ/հատ	1200	2400	3600	4800
18	Հայկական տպագիր, էլեկտրոնային և հեռարձակվող ԶԼՄ-ների մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում , տեղեկանք/հատ	204	408	612	816
19	Սոցիալական ցանցերի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	72	144	216	288
20	Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր հրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում, ամփոփագիր/հատ	72	144	216	288
21	Օրվա լրահոսի համառոտ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	72	144	216	288
22	Հրատապ թեմաներով ուսումնասիրությունների պատրաստում, տեղեկանք/հատ	41	82	123	164
23	Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և ամփոփիչ տեղեկանքների պատրաստում, տեղեկանք/հատ	52	104	156	208
24	Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ, ասուլիս/հատ	12	24	36	48
25	Լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում, ծրագիր հատ	1	2	3	4
26	Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ հոդված/հատ	36	75	112	150
27	Լրատվական դաշտում տեղ գտած ապատեղեկատվությունների հերքումներ, հրապարակումներ/հատ	50	100	150	200
28	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ հարցազրույցներ, ասուլիսներ/հատ	40	80	120	160
29	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով բուհերի ուսանողների հետ վերապատրաստման աշխատանքների իրականացում, միջոցառում/հատ	1	2	3	4
30	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով թեմատիկ տեղեկանքների կազմում, տեղեկանք/հատ	10	20	30	40

31	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի ներքին և արտաքին քաղաքական դաշտի վերաբերյալ հոդվածների պատրաստում և հրապարակում հայկական և արտասահմանյան լրատվամիջոցներում, հոդված/հատ	50	100	150	200
32	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական թեմայով փաստավավերագրական ֆիլմերի թողարկում, ֆիլմ/հատ	0	1	1	2
33	Հանրությանը ծառայություններ մատուցող գերատեսչությունների կողմից մատուցվող ծառայությունների և դրանց մանրամասն նկարագրության պատրաստում, խմբագրում, սրբագրում: Պաշտոնական կայքում դրանց տեղադրում, տեքստ/էջ	500	1000	1500	2000
34	Սփյուռքին առնչվող էլեկտրոնային պարբերականում հրապարակվող տեղեկատվական նյութեր/հատ	1500	3000	4500	6000
35	Սփյուռքին առնչվող էլեկտրոնային պարբերականի այցելությունների թիվ, այցելու/հոգի	300000	600000	900000	1200000
36	Սահմանված գործառույթների իրականացման պարբերականություն, օր	ամենօրյա	ամենօրյա	ամենօրյա	ամենօրյա
Պահանջվող գումարը (դրամ)		150264200	338094400	524924600	751320800

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝

Վարչապետի աշխատակազմ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆգործառնական վարչություն
Հ/Հ 900011018406
ՀՎՀՀ 02505554

_____ Վ.Պապիկյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 23
ՀՀ ՖՆգործառնական վարչություն
Հ/Հ 900018005695
ՀՎՀՀ 00257466

Տնօրենի առաջին տեղակալ

_____ Լ.Մինասյան

Կ.Տ.

Արձանագրություն N 01

միջոցառումների կատարման վերաբերյալ ընդունման հանձնման
«14» «ապրիլ» 2020թ.

Պայմանագրի անվանումը՝ դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08.01.2020թ.
Պայմանագրի համարը՝ 01

ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ)՝ ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Հովհաննես Մովսիսյանի կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «08» «հունվարի» 2020թ. մինչև «31» «մարտի» 2020թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

N	Գործառույթների նկարագրություն	Չափի միավոր	Քանակ
1	ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում	նյութ	21
2	Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում	միջոցառում	3
3	Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում	միջոցառում	1
4	Հաղորդումների պատրաստում, որոնք կլուսաբանեն Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները	հաղորդում	80
5	Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում	գրառում	1266
6	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	504
7	Ներքաղաքական թեմաներով անհատական թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	60
8	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ վերլուծական հոդվածների պատրաստում	հոդված	26
9	Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	72
10	Տեղեկատվական ամփոփագրերի պատրաստում արտասահմանյան գործընկեր ԶԼՄ-ների համար	ամփոփագիր	12
11	Սոցիալ-տնտեսական թեմաներով թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	20
12	Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	43
13	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	14
14	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին տեղեկատվական բնույթի ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	59
15	Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	15
16	Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	24
17	Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում	նյութ	1296
18	Հայկական տպագիր, էլեկտրոնային և հեռարձակվող ԶԼՄ-ների մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	368

19	Սոցիալական ցանցերի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	77
20	Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր հրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	77
21	Օրվա լրահոսի համառոտ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	180
22	Հրատապ թեմաներով ուսումնասիրությունների պատրաստում	տեղեկանք	55
23	Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և ամփոփիչ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	52
24	Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ	ասուլիս	59
25	Լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում	ծրագիր	0
26	Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ	հոդված	45
27	Լրատվական դաշտում տեղ գտած ապատեղեկատվությունների հերքումներ	հրապարակում	98
28	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ հարցազրույցներ, ասուլիսներ	հատ	103
29	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով բուհերի ուսանողների հետ վերապատրաստման աշխատանքների իրականացում	միջոցառում	1
30	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով թեմատիկ տեղեկանքների կազմում	տեղեկանք	2
31	Պարբերականում հրապարակված տեղեկատվական նյութերի թիվ	հատ	-
32	Պարբերականի այցելությունների թիվ	հատ	-
33	Հրապարակված նյութերի մեջ սփյուռքի համայնքներին վերաբերող նյութերի թիվը	տոկոս	-

2. «08» «հունվարի» 2020թ. մինչև «31» «մարտի» 2020թ. ընկած ժամանակահատվածում Աշխատակազմը Կազմակերպությանն է տրամադրել 144 016 700.00 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն տասնվեց հազար յոթ հարյուր դրամ) ՀՀ դրամի չափով դրամաշնորհ, իսկ Կազմակերպության կողմից Աշխատակազմին դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարը կազմել է 151 926 907.20 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն ինը հարյուր քսանվեց հազար ինը հարյուր յոթ դրամ քսան լումա) ՀՀ դրամ:

3. Ակտը կազմված է 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	**ՍՏԱՑՈՂ՝**
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 ---------- Վ.Պապիկյան Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 23 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 ---------- Հ.Մովսիսյան Կ. Տ.

Արձանագրություն N 02

միջոցառումների կատարման վերաբերյալ ընդունման հանձնման
«15» «հուլիսի» 2020թ.

Պայմանագրի անվանումը՝ դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08.01.2020թ.
Պայմանագրի համարը՝ 01

ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ)՝ ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Հովհաննես Մովսիսյանի կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «հունիսի» 2020թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

N	**Գործառույթների նկարագրություն**	**Չափի միավոր**	**Քանակ**
1	ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում	նյութ	39
2	Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում	միջոցառում	3
3	Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում	միջոցառում	2
4	Հաղորդումների պատրաստում, որոնք կլուսաբանեն Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները	հաղորդում	98
5	Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում	գրառում	2452
6	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	1008
7	Ներքաղաքական թեմաներով անհատական թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	102
8	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ վերլուծական հոդվածների պատրաստում	հոդված	64
9	Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	143
10	Տեղեկատվական ամփոփագրերի պատրաստում արտասահմանյան գործընկեր ԶԼՄ-ների համար	ամփոփագիր	15
11	Սոցիալ-տնտեսական թեմաներով թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	32
12	Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	77
13	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	26
14	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին տեղեկատվական բնույթի ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	125
15	Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	51
16	Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	51
17	Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում	նյութ	2650
18	Հայկական տպագիր, էլեկտրոնային և հեռարձակվող ԶԼՄ-ների մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	736
19	Սոցիալական ցանցերի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	154

20	Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր հրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	154
21	Օրվա լրահոսի համառոտ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	320
22	Հրատապ թեմաներով ուսումնասիրությունների պատրաստում	տեղեկանք	87
23	Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և ամփոփիչ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	104
24	Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ	ասուլիս	159
25	Լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում	ծրագիր	0
26	Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ	հոդված	90
27	Լրատվական դաշտում տեղ գտած ապատեղեկատվությունների հերքումներ	հրապարակում	152
28	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ հարցազրույցներ, ասուլիսներ	հատ	148
29	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով բուհերի ուսանողների հետ վերապատրաստման աշխատանքների իրականացում	միջոցառում	1
30	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով թեմատիկ տեղեկանքների կազմում	տեղեկանք	19
31	Պարբերականում հրապարակված տեղեկատվական նյութերի թիվ	հատ	-
32	Պարբերականի այցելությունների թիվ	հատ	-
33	Հրապարակված նյութերի մեջ սփյուռքի համայնքներին վերաբերող նյութերի թիվը	տոկոս	-

2. «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «հունիսի» 2020թ. ընկած ժամանակահատվածում Աշխատակազմը Կազմակերպությանն է տրամադրել 595 722 600.00 (հինգ հարյուր իննսունհինգ միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար վեց հարյուր դրամ) ՀՀ դրամի չափով դրամաշնորհ, իսկ Կազմակերպության հատուցվող ծախսը կազմել է 568 520 868.00 (հինգ հարյուր վաթսունութ միլիոն հինգ հարյուր քսան հազար ութ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, որից Աշխատակազմին դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարը կազմել է 313 227 738.00 ՀՀ դրամ, նախորդ տարիների ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունների մարման ծախսերը՝ 255 293 130.00 (ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 715-Ն որոշմամբ հատկացված գումար՝ 254 290 000.00 ՀՀ դրամ, վերը նշված պայմանագրի շրջանակներում Կազմակերպությանը հատկացվող ընթացիկ գումարների հաշվին՝ 1 003 130.00 ՀՀ դրամ) ՀՀ դրամ:

3. Ակտը կազմված է 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	**ՍՏԱՑՈՂ՝**
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 _____ Կ.Պապիկյան Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 23 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 _____ Հ.Մովսիսյան Կ. Տ.

Արձանագրություն N 03

միջոցառումների կատարման վերաբերյալ ընդունման հանձնման
«15» «հոկտեմբերի» 2020թ.

Պայմանագրի անվանումը՝ դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08.01.2020թ.
Պայմանագրի համարը՝ 01

ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ)՝ ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Հովհաննես Մովսիսյանի կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «սեպտեմբերի» 2020թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

N	**Գործառույթների նկարագրություն**	**Չափի միավոր**	**Քանակ**
1	ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում	նյութ	51
2	Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում	միջոցառում	3
3	Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում	միջոցառում	12
4	Հաղորդումների պատրաստում, որոնք կլուսաբանեն Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները	հաղորդում	110
5	Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում	գրառում	2885
6	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	1512
7	Ներքաղաքական թեմաներով անհատական թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	150
8	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ վերլուծական հոդվածների պատրաստում	հոդված	80
9	Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	221
10	Տեղեկատվական ամփոփագրերի պատրաստում արտասահմանյան գործընկեր ԶԼՄ-ների համար	ամփոփագիր	27
11	Սոցիալ-տնտեսական թեմաներով թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	74
12	Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	125
13	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	53
14	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին տեղեկատվական բնույթի ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	177
15	Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	87
16	Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	77
17	Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում	նյութ	4022
18	Հայկական տպագիր, էլեկտրոնային և հեռարձակվող ԶԼՄ-ների մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	1104
19	Սոցիալական ցանցերի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	231

20	Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր հրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	231
21	Օրվա լրահոսի համառոտ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	462
22	Հրատապ թեմաներով ուսումնասիրությունների պատրաստում	տեղեկանք	129
23	Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և ամփոփիչ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	156
24	Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ	ասուլիս	262
25	Լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում	ծրագիր	-
26	Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ	հոդված	152
27	Լրատվական դաշտում տեղ գտած ապատեղեկատվությունների հերքումներ	հրապարակում	243
28	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ հարցազրույցներ, ասուլիսներ	հատ	205
29	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով բուհերի ուսանողների հետ վերապատրաստման աշխատանքների իրականացում	միջոցառում	2
30	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով թեմատիկ տեղեկանքների կազմում	Տեղեկանք	35
31	Պարբերականում հրապարակված տեղեկատվական նյութերի թիվ	հատ	364
32	Պարբերականի այցելությունների թիվ	հատ	-
33	Հրապարակված նյութերի մեջ սփյուռքի համայնքներին վերաբերող նյութերի թիվը	տոկոս	63

2. «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «սեպտեմբերի» 2020թ. ընկած ժամանակահատվածում Աշխատակազմը Կազմակերպությանն է տրամադրել 786 212 100.00 (յոթ հարյուր ութսունվեց միլիոն երկու հարյուր տասներկու հազար մեկ հարյուր դրամ) ՀՀ դրամի չափով դրամաշնորհ, իսկ Կազմակերպության հատուցվող ծախսը կազմել է 749 043 817.20 (յոթ հարյուր քառասունինը միլիոն քառասուներեք հազար ութ հարյուր տասնյոթ դրամ քսան լումա) ՀՀ դրամ, որից Աշխատակազմին դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարը կազմել է 493 750 687.20 (չորս հարյուր իննսուներեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր ութսունյոթ դրամ քսան լումա) ՀՀ դրամ, նախորդ տարիների ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունների մարման ծախսերը՝ 255 293 130.00 (երկու հարյուր հիսունհինգ միլիոն երկու հարյուր իննսուներեք հազար մեկ հարյուր երեսուն դրամ) ՀՀ դրամ (ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 715-Ն որոշմամբ հատկացված գումար՝ 254 290 000.00 (երկու հարյուր հիսունչորս միլիոն երկու հարյուր իննսուն հազար դրամ) ՀՀ դրամ, վերը նշված պայմանագրի շրջանակներում Կազմակերպությանը հատկացվող ընթացիկ գումարների հաշվին՝ 1 003 130.00 (մեկ միլիոն երեք հազար մեկ հարյուր երեսուն դրամ) ՀՀ դրամ):

3. Ակտը կազմված է 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 ----------Գ.Հարությունյան Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 23 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 Հ.Մովսիսյան Կ.Տ.

Արձանագրություն N 04

միջոցառումների կատարման վերաբերյալ ընդունման հանձնման
«15» «հունվարի» 2021թ.

Պայմանագրի անվանումը՝ դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 08.01.2020թ.
Պայմանագրի համարը՝ 01

ՀՀ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ)՝ ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության տնօրենի լիազորությունները կատարող տնօրենի առաջին տեղակալ Լիլիթ Մինասյանի կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

1. Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «դեկտեմբերի» 2020թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

N	Գործառույթների նկարագրություն	Չափի միավոր	Քանակ
1	ՀՀ շահերին առնչվող միջազգային կառույցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում	նյութ	60
2	Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում	միջոցառում	4
3	Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառույցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում	միջոցառում	34
4	Հաղորդումների պատրաստում, որոնք կլուսաբանեն Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները	հաղորդում	122
5	Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում	գրառում	5797
6	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	2016
7	Ներքաղաքական թեմաներով անհատական թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	180
8	Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ վերլուծական հոդվածների պատրաստում	հոդված	98
9	Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	300
10	Տեղեկատվական ամփոփագրերի պատրաստում արտասահմանյան գործընկեր ԶԼՄ-ների համար	ամփոփագիր	31
11	Սոցիալ-տնտեսական թեմաներով թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	79
12	Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	153
13	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	59
14	ՀՀ համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին տեղեկատվական բնույթի ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	192
15	Տարածաշրջանային երկրների ներքաղաքական զարգացումների մասին (Վրաստան, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	98
16	Թուրքիայի և Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	89
17	Թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում	նյութ	5300
18	Հայկական տպագիր, էլեկտրոնային և հեռարձակվող ԶԼՄ-ների մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	1472
19	Սոցիալական ցանցերի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	308
20	Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր հրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում	ամփոփագիր	308
21	Օրվա լրահոսի համառոտ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	604

22	Հրատապ թեմաներով ուսումնասիրությունների պատրաստում	տեղեկանք	175
23	Տեղեկատվական հոսքերի վերլուծություն և ամփոփիչ տեղեկանքների պատրաստում	տեղեկանք	208
24	Արտաքին քաղաքական գործընթացների, սպասվող կամ իրականացված գործողությունների հանրամատչելի ներկայացում, համապատասխան հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողություններ	ասուլիս	290
25	Լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում	ծրագիր	-
26	Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ	հոդված	257
27	Լրատվական դաշտում տեղ գտած ապատեղեկատվությունների հերքումներ	հրապարակում	421
28	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության, Ադրբեջանի հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ հարցազրույցներ, ասուլիսներ	հատ	217
29	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով բուհերի ուսանողների հետ վերապատրաստման աշխատանքների իրականացում	միջոցառում	2
30	Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական հակամարտության թեմայով թեմատիկ տեղեկանքների կազմում	Տեղեկանք	48
31	Պարբերականում հրապարակված տեղեկատվական նյութերի թիվ	հատ	1352
32	Պարբերականի այցելությունների թիվ	հատ	34000
33	Հրապարակված նյութերի մեջ սփյուռքի համայնքներին վերաբերող նյութերի թիվը	տոկոս	52

2. «08» «հունվարի» 2020թ. մինչև «30» «դեկտեմբերի» 2020թ. ընկած ժամանակահատվածում Աշխատակազմը Կազմակերպությանն է տրամադրել 1 022 845 600.00 (մեկ միլիարդ քսաներկու միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով դրամաշնորհ, իսկ Կազմակերպության հատուցվող ծախսը կազմել է 959 870 490.00 (ինը հարյուր հուսունինր միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր իններսուն) ՀՀ դրամ, որից Աշխատակազմին դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարը կազմել է 704 577 360.00 (յոթ հարյուր չորս միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, նախորդ տարիների ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունների մարման ծախսերը՝ 255 293 130.00 (երկու հարյուր հիսունհինգ միլիոն երկու հարյուր իններսուներեք հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ (ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 715-Ն որոշմամբ հատկացված գումար՝ 254 290 000.00 (երկու հարյուր հիսունչորս միլիոն երկու հարյուր իններսուն հազար) ՀՀ դրամ, վերը նշված պայմանագրի շրջանակներում Կազմակերպությանը հատկացվող ընթացիկ գումարների հաշվին՝ 1 003 130.00 (մեկ միլիոն երեք հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ): Կազմակերպությունը 15.01.2021թ. ՀՀ պետական բյուջե է վերադարձրել 62 975 110.00 (վաթսուն երկու միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար մեկ հարյուր տասը) ՀՀ դրամի չափով մնացորդը:

3. Ակտը կազմված է 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 _____ Վ. Պապիկյան Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 23 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 _____ Լ. Մինասյան Կ. Տ.